ԿՐՕՆԱԿԱՆ

Տ. ՇԱՀԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 դեկտեմբերի, 2014 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տէր, յաւել մեզ հաւատս»
(Ղուկ. ԺԷ. 5):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Այսօրվա սուրբգրային երեք ընթերցումներն էլ նվիրված էին քրիստոնեական կյանքի կարեւորագույն երեւույթին՝ հավատին: Եսայի մարգարեից քաղված հատվածը (հմմտ. ԼԸ. 1-8) դատապարտում էր հավատի մեջ Իսրայելի թերացումը, քանի որ իսրայելացիներն ավելի շատ հավատում էին օտար տերությունների զորքերին, քան Կենդանի Աստծուն: Պողոս առաքյալի կողմից Եբրայեցիներին ուղղված նամակում (հմմտ. Ա. 1-10) բացատրվում էր քրիստոնեական կյանքի առանցքը՝ հավատ Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի նկատմամբ: Վերջապես, Ղուկասու Ավետարանից ընթերցված դրվագը պատմում էր առաքյալների՝ հավատի մեջ զարգանալու անկեղծ ցանկության եւ նրանց՝ Հիսուս Քրիստոսի կողմից տրված պատասխանի մասին: Այս բոլոր պատումների մեջ ընդհանուր ու էական է մի շատ կարեւոր պարագա. Աստծո հանդեպ հավատն առանձնանում է ոչ թե մարդուն տրված յուրահատուկ զորություններով, այլ՝ կյանքում յուրաքանչյուր մարդու կողմից կատարվող պարզ ու հասարակ պարտականությունների հստակ գիտակցման անկեղծությամբ:

Եւ այսպես, Ղուկաս ավետարանիչը ներկայացնում է խորհրդանշական մի պատմություն: Տերը մի քանի հայտնի առակ պատմելուց հետո իր աշակերտներին զգուշացնում է եղբորը ներելու եւ նրան չգայթակղեցնելու մասին: Ավելին, Տիրոջ պատվիրանի համաձայն՝ եթե եղբայրը մեղանչի յոթ անգամ շարունակ ու յոթ անգամ էլ զղջա եւ ապաշխարի, պետք է ներել նրան: Եւ ահա հանկարծ առաքյալներն անկեղծորեն խնդրում են իրենց սիրելի Ուսուցչին. «Տե՛ր, ավելացրու մեր հավատը»: Կարծես թե Հիսուսի պատգամը

ծանր է թվում, եւ առաքյալները կարիք ունեն այդ ամենը երաշխավորող ու հաջողեցնող հավատի: Բայց Քրիստոսի պատասխանն առավել անսպասելի է. «Եթե նույնիսկ մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, եւ այս թթենուն ասեք՝ “Ելիր, ծովի մեջ ընկի՛ր, ձեզ կհնազանդվի”: Մի՞թե ծառաներն ակնկալում են Տիրոջ հատուկ շնորհակալությունը, չէ՞ որ նրանք համեստաբար իրենց պարտականությունն են կատարում: Այդպես էլ դուք, երբ ձեզ հրամայվածն անեք, ասեք, թե անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտական էինք անելու՝ արեցինք» (հմմտ. Ղուկ. ԺԷ. 6-10): Կարելի է պատկերացնել առաքյալների ու աշակերտների զարմանքը, որոնց ականջներին Տիրոջ պատգամն ու պատվերն ավելի շատ հնչում էին քննադատության եւ զգուշացման երանգով: Թերեւս Տերը խորապես թափանցել էր նրանց մտքի ու հոգու թաքուն ծալքերը, եւ այժմ ասված խոսքերը պարզապես անսպասելի էին առաքյալների համար: Մի՞թե նրանք, որ լծված էին իրենց Ուսուցչի վարդապետության տարածմանը, հաճախ Վարդապետի հատուկ ու առանձին ներկայությունն էին վայելում, նրանց էր միայն բացվում առակների գաղտնիքը, նրանցից մի քանիսը նույնիսկ ականատես էին եղել հրաշքների ու Պայծառակերպության, եւ հիմա իրենց այդ առավելությունը համեմատվում էր մանանեխի հատիկի՞ հետ: Իհարկե, Ավետարանը չի ներկայացնում, թե ինչպես ընկալեցին այդ խոսքերն առաքյալները. չգիտենք՝ նրանք տրտմեցի՞ն, թե՞ պարզապես սպասում էին, որ, ինչպես մնացած դեպքերում, այս անգամ եւս Հիսուս նրանց պիտի բացատրեր իր խոսքերի իմաստը: Ավետարանի այս դրվագի հոգեւոր պատգամն այսօր կարող է ուղենիշ դառնալ՝ մեր կյանքում եւ հոգեւոր ներաշխարհում կողմնորոշվելու համար:

Ինչպես անցյալում, մեր հասարակության մեջ եւս շատերի համար հավատը չափվում է. այն շատ կամ քիչ է, ոմանք հավատն ընկալում են իբրեւ կյանքում հաջող ու ապահով մի հիմք՝ կենցաղային հանգամանքներում իրենց նպատակին հասնելու համար: Ոմանք էլ հավատի չափումը սահմանում են հոգեւոր կյանքում հաջողություններով՝ շատ հաճախ իրենք իրենց վերագրելով հրաշքի ու խորհրդավոր ինչ-ինչ երեւույթների հեղինակություն: Սակայն այս ամենը չի տեղավորվում Ավետարանի այսօրվա ընթերցվածի պատգամի մեջ: Հիսուս առաքյալներից պահանջում է ոչ թե մեծ հավատ Աստծո հանդեպ, այլ պարզապես հավատ մեծ եւ գթասիրտ Աստծո՝ Հոր հանդեպ: Նրա պատգամները կատարելու համար անհրաժեշտ է ոչ թե ավելի շատ հավատ, այլ անկեղծ հավատի պարզ ներկայություն: Հավատը չափվում է ոչ թե քանակով, այլ դրա պարզ ներկայությունից բխող քայլերով: Խնդիրն այստեղ ոչ թե հավատի, այլ խոնարհության ու հնազանդության մեջ է:

Ընդհանրապես Ավետարաններում Հիսուսին հետեւելու պայմաններն այդքան էլ հեշտ չեն. Նրան հետեւողը պետք է թողնի ամեն բան՝ հարստություն, հայր, մայր, քույր ու եղբայր, վերցնի իր խաչն ու լծվի Աստծո հավատի առաքելությանը (հմմտ. Ղուկ. ԺԴ. 25-34): Իսկ այժմ պատկերացրեք, որ այս-

պիսի պայմանների կողքին Տերն ընդամենը պահանջում է մանանեխի հատիկի չափ հավատ...

Այս համեմատության մեջ իրավացի է հնչում հետեւյալ հարցը՝ ավելի շատ հավա՞տ, թե՞ ավելի շատ հնազանդություն Աստծուն ու Նրա խոսքին: Ավետարաններում հարցի պատասխանները ներկայացված են բազմաթիվ օրինակներով. քանանացի կինը, հեթանոսներ, բորոտներ, մաքսավորներ, շնացողներ, որոնց բոլորին, ի զարմանս հրեաների եւ նույնիսկ առաքյալների, Քրիստոս մատնացույց է անում իբրեւ մեծ ու գթասիրտ Աստծո հանդեպ մանանեխի հատիկի չափ հավատ ունեցող մարդկանց: Հիսուսի՝ առաքյալներին տրված պատասխանն այս իմաստով շտկում է շատ ու շատ թյուր ընկալումներ: Հոգեւոր կյանքը ոչ թե ավելի ու ավելի շատ հավատ ձեռք բերելու, այլ եղածն արդյունավորելու մշտական ընթացք է: Պատահական չէ, որ Հիսուս իր առաքյալներին տալիս է մանանեխի հատիկի օրինակը: Մատթեոսի Ավետարանում Հիսուս Աստծո արքայությունը նմանեցնում է մանանեխի հատիկի, որ փոքր է, բայց, հողի մեջ դրվելով, աճում-դառնում է ծառ, որի ճյուղերին նույնիսկ թռչուններն են հանգիստ գտնում (հմմտ. Մտթ. ԺԳ. 31):

Սիրելինե՛ր, եկեք մի պահ մտածենք, որ Աստծուն մոտենում ենք՝ մեր մտքի մեջ ունենալով այն միտքը, թե մեր հավատն ավելի շատ է, թե մենք մեր հոգեւոր կյանքում նորանոր ձեռքբերումներ ենք ունենում՝ ավելացնելով մեր հավատը: Բայց մի՞թե որեւէ մեկիս հավատը կարող է չափվել Աստվածորդու անսահման խոնարհության ու Հոր կամքին ունեցած հնազանդության հետ: Ո՞վ մեզանից կկարողանա դիմանալ այդ համեմատությանը... Անշուշտ, պատասխանն ինքնին պարզ է ու հասկանալի: Բայց մեզանից յուրաքանչյուրը, Ավետարանական այս պատգամի համաձայն, կարող է իր պարտականությունների անկեղծ գիտակցմամբ ու իրագործմամբ իր հոգում անթեղել մանանեխի այն փոքրիկ հատիկը, որին Տերն առակի մեջ տվեց «Աստծո արքայություն» անվանումը: Մանանեխի հատիկի չափ հավատ ունեցողը երբեք չի փորձում չափել այն, այլ փնտրում է պարարտ ու բերրի հողը, որտեղ կարող է ցանել ու աճեցնել իր հավատը: Ուրեմն իրենց պարտականությունները Տիրոջ առջեւ կատարող պարզ ու անպիտան ծառաների գիտակցումն է մեզ համար դառնում առաջնորդող. «Տե՛ր, մենք անպիտան ծառաներ ենք, ինչ որ պետք էր անելու, արեցինք: Մենք մեր ունեցած փոքրիկ, աննշան մանանեխի հատիկն ենք դնում Քո հայրական ձեռքերի մեջ, որպեսզի Դու ինքդ պատրաստես բերրի այն հողը, որտեղ հատիկը կդառնա ծառ, իսկ ծառը հովանի կանի մեր մերձավորներին»: Ահա այս է մանանեխի հատիկի չափ հավատի խորհուրդը, որ Հիսուս Քրիստոս իր առաքյալների միջոցով փոխանցում է նաեւ մեզ: Հավատ, որը երբեք համեմատության չի ձգտում, հավատ, որի ամենափոքր դրսեւորումն իսկ ամենամեծ գործի սկիզբն է դառնում, հավատ, որ մեզանից պահանջում է մեր Տերը, որ է օրհնյալ հավիտյանս հավիտենից. ամեն: